




ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻ ՏԱԿ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ 1947 ԹՎԻ ՔԱՐԱՎԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԻՔ

ԲԱՐԹՈՒՄԻ, 9 հունիսի (229-ի հատ. թղթ.).
Այսօր, ժամը 13-ին, «Պորեզ» շերմանավով թաթումի ժամանեց Սիրիայից և Լիբանանից Սովետական Հայաստան վերադարձող հայերի նոր քարավանը։ Զերմանավի ժամանումից դեռ շատ տուաջ նավահանգիստ էին հայաբնել աշխատավորների բազմաթիվ ներկայացուցիչներ։ Նոանց թվումն են՝ Հայ-

Զերմանավը դանդաղորեն մոռենում է նավամատուցին։ Նավի տախտակամածից լսվում են «ուսուա» ոգեշոնչ բացականչություններ և Սովետական Միության ու Հայկական ՍՍՌ հմտների հանդիսավոր հնչունները։ Բոլորը երգում են։ Զերմանավը զարդարված է սովետական դրոշակներով և մեծ կտակներով, որոնց վրա գրված են. «Մեր



«Պորեզ» շերմանավով ժամանած հայրենա դարձների մի խումբ թարումիի նավահանգստում

կական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արտասահմանյան հայերի ընդունման և տեղափոխման կոմիտեի ներկայացուցիչ ընկ. Բ. Աստվածաբրյանը, տեղական պարտիական և սովետական կազմակերպությունների ներկայացուցիչները։

շերմագին ողջույնը հարազատ Ստալինին», ալղջուն Սովետական Միության եղբայրության ժողովուրդներին, «Ալղջուն սովետական նոր քաղաքացիներին ակտովյան նախատիներից»։ Զերմանավը կանդ է առնում։ Լույս են

երգի հնչուններ, ողջուններ: Ժամանածների աղմկալից ծափանարությունների տակ շերմանավի վրա են բարձրանում հայրենադարձության կոմիտեի ներկայացուցիչները: Աշարական ԱՍՍՌ Առողջապահության մինիստր Ն. Շատրիկաշվիլին նվիրում է նորածին երիխանների մայրերին մանկական օժիտներ և ծաղկեփնչեր. (Ճանապարհին ծնվել են երկու աղջ և մի աղջիկ):

Առաջին քարավանով ժամանել է 2.331 մարդ, ավելի քան 450 ընտանիք, որոնցից չու 200 ընտանիք գյուղացիներ են, մյուսները արհեստավորներ. փականագործ վարպետներ, կոշկակարներ, էլեկտրիկներ, շոֆերներ, կառուցողներ ժամանածների մեջ են Բաղրամյանի անվան Բերտութի փուտրուային թիմի մի քանի ջուտերովիստներ:

Հայաստանի հեռադրական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցի ժա-

մանակ քարավանի ղեկավար Հակոբ Թրյանն ասաց. —

— Հայրենասիրական մեծագույն խանգավառությամբ մենք ուղևորվում ենք զեափի հայսենիք՝ Սովետական Հայաստան, որպեսզի ամենաակտիվ մասնակցությունն ունենանք մեծ շինարարությանը: Մենք մեր բոլոր ուժերը կնվիրենք սովետական հայրենիքի բարորությանը:

«Պրեհայ» չերմանավի վրա մենք հենց առաջին օրվանից զգացինք սովետական մարդկանց կողմից զեափի մեզ ցուցաբերվող ուշադրությունն ու հոգատարությունը, որով շափական զգացված ենք:

Մենք անսահմանորեն ուրախ ենք, որ գտնվում ենք սովետական հոգի վրա և այդ ուրախության համար մեր անսահման երախտագիտությունների ներայացուցիչ-

Հուլիսի 17-ին Երևան ժամանեց արտասահմանից Սովետական Հայաստան վերա-

րի, Հիմնարկների, գիտական և տնտեսական հաստատությունների ներկայացուցիչ-



Երևանի կայարանում. — Քաղսովետի գործկոմի նախագահ Ա. Վարդանյանը ողջունում է նորեկներին:

Դարձող հայերի այս տարվա առաջին քարավաններ:

Վաղ առավոտից երկաթուղային կայարան էին հայվալել մայրաքաղաքի գործարաննե-

ներն ու անցյալ տարի արտասահմանից ներգաղթածներից շատերը:

Կայարանը զարգարված էր կարմիր զրոշներով ու լողունկներով: Աշխի ընկնող տե-

զում զրված էր ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի մեծադիր պորտրետ:

Կառամատուցի ճակատին փակցված էր «Բարի գալուստ մեր Հայրազատ եղբայրներին ու քույրերին» կարմիր պատուառը:

Գնացքը դանդաղ մոտենում է կառամատուցին, ամեն կողմից լսվում են «բարի գալուստի» սրտառուշ բացականչությունները: Փողային նվագախումբը կատարում է նովիտական Հայաստանի պետական հիմքը: Իրար հետեւից ծաղկեփնջեր են նետվում դեպի գնացքը:

Անկատը պրոֆեսոր Հ. Պողոսյանը և Երևանի երկաթուղային կայարանի վագոնային պարկի պետ Վ. Սարգսյանը:

Բուռն ծափերի տարափի տակ ամրիոն է բարձրանում քարավանի ղեկավար Հակոբ Թրյանը:

— Մենք այսօր ապրում ենք այն երջանիկ օրը, որ աշնան կարոտագին երազում էինք տարիներ շարունակ: Աշխատավոր ժողովրդների սիրելի առաջնորդ մեծ Ստալինի շնորհիվ արտասահմանի անտուն, անօթևան ու իրավազորկ հայերն իրավունք ստացան վերապառնալ հարազատ



Երևանի կայարանում.— Տարավանի դեկալար Հակոբ Թրյանը հայրենադարձների անունից ողջունում է մայրաքաղաքի աշխատավորությանը

Նորեկներին դիմավորելու են եկել ուսուցության պարտիական ու սովետական օրգանների ղեկավար աշխատողները: Երեւանի Քաղսովետի ղործկոմի նախագահ ընկ. Ե. Վարդանյանը շերմորեն ողջունելով մեր հայրենակից եղբայրներին, առաջին քարավանի ժամանմանը նվիրված միտինդը հայտարարում է բացված: Երևանի աշխատավորների և կառավարության անունից ողջունի խոսքով հանդես են գալիս Վ. Մոլոտովի անվան պետական համալսարանի

Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Մենք խոսք ենք տալիս սովետական կառավարությանը՝ հայրենի հարկի տակ ամրողությունը մասնակցել երկրի վերաշնման ու զարգացման մեծ գործին: Կեցցե՛ մեր փրկարար հարազատ Ստալինը: Կեցցե՛ Ս. վեհական կառավարությունը:

Միտինդից հետո հայրենադարձ հայերը ավտոմեքենաներով մեկնեցին իրենց հատկացված նոր բնակարանները:

ԱՐՏԱՇԱՏ. — Հուլիսի 17-ին շրջանի աշխատավորությունը գրկաբաց ընդունեց մերժությունը եկած հայրենադարձների 44 տղնտեսությունից բազկացած մի նոր խմբի:

Կայարանում կագմակերպված թուոցիկ մի-

տինգից հետո նրանք ավտոմեքենաներով տեղափոխվեցին Դարձալու, Ն. Դվին, Նորաշեն, Գետաղատ և մյուս դյուզերը:

(229)

ԼԵՆԻՆԱԿԱՆ. — Բաթումից այստեղ ժամանեց գնացքը, բերելով իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադարձող համար կայարանին: Նրանց դիմավորելու համար կայարանին հավաքվել բազաբան աշխատավորները:

Կայարանի կառամատուցում միտինգ տե-

ղի ունեցավ, որտեղ ողջունի խոսքով հանդիս եկալ ՀԿ(Բ)Պ Լենինականի քաղաքային կոմիտեի քարտուղար ընկ. Բաղդասարյանը:

Լենինական են ժամանել 267 հայրենադարձներ: Հաջորդ օրը նրանք բոլորն էլ տեղավորվեցին նոր բնակարաններում:

(229)

ԲԱԹՈՒԽԻՄԻ. 30 հուլիսի (Հատ. թղթ.). — Հուլիսի 30-ի երեկոյան, «Պոբեդա» շոգենավով Բաթումի ժամանեց Սիրիայից և Լիբանանից այս տարի հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերի իրերորդ խոսմբը: Ընդամենը ժամանել են 678 ընտանիք՝ 3120 մարդ: Ժամանածներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ ընկ. Բ. Աստվածատրյանը

և Բաթումիի հասարակայնության ներկայացուցիչները: ՀՀԴ-ի թղթակցի հետ անեցած զրոյցի ժամանակ քարավանի պետ Հրանտ Դեվչյանը հաղորդեց, որ Բեյրութից—Բաթումի, ույսը կատարվել է բարեհաջող: Բոլոր ժամանածները աննկարագրելի ուրախություն են հայտնում հայրենիք վերադառնալու առնիվ և լի են սոցիալիստական շինարարությանը ավելի արագ մասնակցելու, իրենց ուժերն ու գիտելիքը հայրենի երկրին նվիրելու ցանկությամբ:

ԲԱԹՈՒԽԻՄԻ. 2 օգոստոսի (ՀՀԴ-ի Հատ. թղթ.). — Բաթումիի նախահանգստի ընդունման կայանում տեղի ունեցավ Սիրիայից և Լիբանանից Սովետական Հայաստան ներկազմով նոր ժամանած հայրենադարձ հայերի միտինգ: Միտինգը հայկական ողերությամբ ողջունի հնուագիր ուղարկեց մեծ առաջնորդ ընկեր Ստավրին:

— Ուսիր զնելով սովետական ազատ հողը, — ասված է հնուագրում, — մենք մեր երախտադիտության առաջին խոսքը հղում ենք զեզ, հայ ժողովրդի լավագույն բարեկամին: Ենորհիվ Զեր հոգատարության իրագործվե-

ցին մեր երազանքները: Վերադառնալով Սովետական Հայաստան, խոստանում ենք Զեզ, ընկեր Ստավրին, որ մեր բոլոր ուժերը կնվիրենք մեր սովետական մեծ հայրենիքի հզուրությունն ել ավելի ուժեղացնելու գործին:

Միտինգը ողջունի հնուագրեր ուղարկեց նաև Հայաստանի Կ(Բ)Պ կենտրոնի քառակիր գերական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ ընկ. Մ. Պապյանին և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախադատության ընկ. Ա. Կարապետյանին:

Օգոստոսի 7-ին, երեկոյան, հատուկ զնացքով Բաթումից երես ժամանեց Սիրիայից և Լիբանանից Սովետական Հայաստան ներկազմով արտասահմանյան հայերի երկրորդ խոսմբը:

Կայարանում ժամանածներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արտասահմանյան հայերի ընդունման ու տեղավորման կոմիտեի և բազաբային սովե-

տի ներկայացուցիչները, ինչպես նաև բազմաթիվ աշխատավորներ:

Չնայած ուշ ժամին, կայարանում կային բազմաթիվ մարդիկ և տիրում էր մեծ աշխատություն: Հավաքվածները բացառիկ ուրախությամբ և զբանագիր ընդունեցին նոր ժամանած սովետական քաղաքացիներին:

Ընդամենը ժամանեց ավելի քան 160 ընտանիք, որոնցից 66 ընտանիք կտեղավորվին:

Երևանում, 42 ընտանիք՝ Կոտայքում, 22 ընտանիք՝ Ախտայում և 34 ընտանիք՝ Բերիայի անվան շրջանում:

Նորեկների քարավանի ղեկավար Հրանտ Դեվեչյանը, որը Բեյրութում դաշնակ տեսուրիստների կողմից ծանր վիրավորվել էր, ՀՀԴ-ի թղթակցին հաւղորդեց հետևալոր:

— Հակայական բերկրանքի և անասելի հուզմունքի զգացմունքով եմ ես ոտք դնում իմ հայրենի հողը: Այդ զգացմունքներով են համակված բոլոր նրանք, ովքեր այսօր ինձ հետ ժամանել են հայրենիք: Սիրիայի և Լի-

բանանի տասնյակ հազարավոր հայերի անոնից, որոնք երազում են վերադառնալ հայրենիք, ինչպես նաև բոլոր ժամանածների կողմից եւ հաղորդում եմ չերմ ողջուն մեր բոլոր սովետական կղզայրներին, որոնց հետ միասին մենք աշխատելու հնք սովետական Հայլենիքի հղորությունը էլ ավելի ամրապնդելու համար: Այս հանդիսավոր և բերեալից ժամին մարդ ցանկանում է ամբողջ Հոգով ամենախոր երախտիքի խոսք ուղղել հայ ժողովրդի փրկիչ մեծ Ստալինին:

(ՀՀԴ)

ԲԱԹՈՒԻՄԻ, 6 օգոստոսի (ՀՀԴ-ի հատ. թղթ).—«Չուկոտկա» շոգենավով Հունաստանից Բաթումի ժամանեց Հայրենիք՝ Սովետական Հայաստան ներգաղթող Հայերի մի նոր խումբ, թվով 1942 մարդ: Ժամանածները վերջին ժամանակներս ապրում էին Սալոնիկի քաղաքում և մերձակա շրջաններում: Սալոնիկից Բաթումի կատարված ուղևորությունը վերածվեց շոգենավի անձնակազմի և սովետա-

կան նոր քաղաքացիների եղբայրական միասնության մի տոնի:

Բաթումի նավահանգստում ժամանածներին կիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրուների Սովետին կից Արտասահմանյան Հայերին ընդունող և տեղավորող կոմիտեի ներկայացուցիչները, ինչպես նաև քաղաքի սովետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Օգոստոսի 15-ին, առավոտյան հաստուկ զնացքով Բաթումիից Երևան ժամանեց Հունաստանից՝ Սովետական Հայաստան ներգաղթող Հայերի առաջին խումբը:

Երևանի երկաթուղարքին կայարանում նրանց դիմավորելու էին եկել ներգաղթի կոմիտեի և քաղաքի կազմակերպությունների ներկայացուցիչները և բազմաթիվ աշխատա-

վորներ, որոնց թվում նաև նորեկների հարազատները:

Առաջին քարավանով Երևան են ժամանել 125 ընտանիք, 982 մարդ, որոնք նույն օրը տեղավորվեցին Երևանում իրենց հատկացված բնակարաններում, իսկ մի մասն ավտոմեքենաներով փոխադրվեց նոր Բայազետի, Բերիայի և Կոտայքի շրջաններ:

(ՀՀԴ)

ԳՈՐԻՄ.—Հատուկ ավտոշարասյունով այս- տեղ ժամանեց Հունաստանից Հայրենիք վերադարձ Հայերի մի խումբ՝ 40 ընտանիքից բաղկացած: Ժամանածների մեջ կան արհեստավորներ, հողագործներ: Հայրենադարձնե-

րը տեղավորվեցին իրենց համար նախօրոք պատրաստված տներում: Շրջանի աշխատավորությունը բերկրանքով ընդունեց իր տարագիր եղբայրներին և քույրերին:

ԲԱԹՈՒԻՄԻ, 21 օգոստոսի (ՀՀԴ-ի հատ. թղթ).—Սալոնիկից Բաթումի է ժամանել Հունաստանից՝ Սովետական Հայաստան վերադարձող Հայերի երկրորդ խումբը: Ընդհանուր ժամանել է 708 ընտանիք, 2.456 մարդ: Ժամանածների ճնշող մեծամասնությունը որակյալ բանվորներ են՝ ծիսախոտագործներ, կոշկակարներ, մեխանիկներ, փականագործներ, շոֆերներ, երկաթուղարքիններ, կառուցող բանվորներ:

Օգոստոսի 22-ին հատուկ գնացքով Բա-

թանանից Հայաստան մեկնեց մի քանի օր առաջ «Պոբեդա» զերմանավով Սիրիայից և Լիբանանից ժամանած Հայերի խումբը: Նորանք իրենց հետ տանում են Հայկական ՍՍՌ Պետական թանգարանին որպես նվիր մատուցելու Հայլենիք վերադառնալուն նվիրված բրոնզյա բարեկեֆ: Այդ բարեկեֆը սխեմաիկ կերպով նկարագրում է Բեյրութից մինչև Բաթումի տանող ուղին: Բարեկեֆի վերին մասում գեղարվեստորեն փորագրված են Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կիսանդ-

րիները ու Սովետական Բանակի սաղմիկի կերպարանքը:

Թանգարանին մատուցվելու է որակս նվերնակ 12—13-րդ դարերի հազվագյուտ դրամների արժեքավոր ժողովածու Ժողովածուն պարունակում է 92 զանազան ձևի 120 դրամ:

Հիմնականում դրանք Կիլիկիայի հայկական պետության դրամներ են: Ժողովածուն կցված է յուրաքանչյուր դրամի նկարագրությունն ու պատմությունը պարունակող ալբում:

ԲԱՅՐՈՒՄԻ, (ՀՀԳ-ի համ. թղթ.). — Օգոստոսի 16-ին «Պոբեդա» զերմանավոր թաթումի ժամանեց Սիրիայից և Լիբանանից Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերի մինոր խումբը: Ընդամենը ժամանել են 3.151 մարդ: Ժամանածների մեջ հն գտնվում թիյրութի ճնոր ուղիւ պրոգրեսիվ ամսագրի խմբագիր Հարություն:

Օգոստոսի 24-ին հատուկ գնացքով Բայրութից Երևան ժամանեց Սիրիայից և Լիբանանից Սովետական Հայաստան վերադարձող հայերի մինոր խումբը:

Կայարանում հայրենազարձներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի, Երևանի քաղաքային և ռայոնական սովետների ներ-

կայացանը, գրող Պ. Պարգևը, երիտասարդ կոմպոզիտոր Հրանտ Գևորգյանը և ուրիշներ:

Հերմանավոր ժամանել է նաև Միջին Արևելքի լավագույն ֆուորուլային թիմերից մեկը՝ Բեյրութի, գեներալ Բաղրամյանի անվան թիմը, իր կապիտան Հայկ Կարմիրյանի զլավորությամբ:

Կայացուցիչները, ինչպես նաև բազմաթիվ աշխատավորներ:

Հնդկամենը ժամանեց 1.437 մարդ: Ժամանածների թվումն են գեներալ Բաղրամյանի անվան Բեյրութի ֆուորուլային թիմի և խաղաղողներ՝ թիմի կապիտան Հայկ Կարմիրյանի գլխավորությամբ:

Նույն օրը բոլոր եկվորները տեղավորվեցին իրենց հատկացված վայրերում:

(ՀՀԳ)

ԴԵՐԻ ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳՐՎԱՆԸ

Վերջապես հասավ Հայրենիք մեկնելու արդաւի ժամը. Հովհանն Յի հրեկոյան մենք արդեն սովետական «Պոբեդա» նավի մեջ էինք և սովետական երկրի քաղաքայի: Այդ գիշեր ուրախությունից գրեթե լքնեցինք: Հաջորդ օրը ժամը 12 և կեսին նավը զիկ սուլեց և իր խարիսխը հավաքելով վկաց դանդաղ հեռանալ Բեյրութի քարափից: Նա ընթացքն արագացրեց, կարծես հասկանալով այն, ինչ կատարվում էր մեր՝ հայրենադարձ մարդկանց հոգում, ուզում էր օր տաշ մեզ հասցնել պաշտելի սովետական աշխարհը:

Կիպրոսը ևս մնաց մեր ետևում, անցանք հունական կղզիները և երկուշարթի երեկոյան դեմ մտանք Դարդանելի նեղուցը: Հին հուշերը ալեկոծեցին ինձ. 33 տարի առաջ ևս ճողովրեցի այս նեղուցով և հազիվ աղատեցի իշանք: Այժմ հպարտությամբ նայում եմ հեռվում կալծիլուղ Այս Սովիային, Սկյութարին, Ղալաթիային իր ծուռ աշտարակով, Պերայի շենքերը և արյունար-րու սովորական Համբդի որդ Ելլովզը:

Վերջապես ցնծագին սրտով մենք մտանք

սովետական զրերը՝ Աև ծովը և հաջորդ օրը Բաթումիի փարթամ, ծիծաղկուտ ու շքեղ ափերը ողջունեցին մեզ:

Ճանապարհն անցավ մի գեղեցիկ երազի պես. ծովերը խաղաղ էին, եղանակը հիանալի: Մեղ ոչ թե ձանձրույթն էր պատում, այլ անհամբերությունը, շուտ բազաւի ափերը հասնելու անշը: Նավի ընդարձակ, շքեղ սրահի մեջ երկու անգամ երեկոյթ տեղի ունեցավ: Ռուա ծովայինները մեզ հիացրին իրենց պարերով, նվազով և լսեցին մեր հայկական երգերը: Առհասարակ, պիտի ասեմ, որ նավի անձնակաղմնաւանց բացառության հոգատար մարդիկ էին և մեզ ցուց տվին գուրգուրանք և եղայրական վերաբերմունք: Անմոռանալի է բազմազգ սովետական ծովայինների սիրաւիր, հոգատար վերաբերմունքը:

Վերջապես մենք հայրենի հողի վրա ենք: Ես 42 տարվա սուուցիչ եմ և մի բազանք եմ ունեցել՝ ծառայել Սովետական Հայրենիքին: Ինձ հետ են իմ գուատրերը՝ Շաբին և Սոնան՝ երկուսն էլ մանկակարժ: Ես բազմամյա մանկակարժական փորձը, զուստ-

բերիս երիտասարդական ավյունը սովետական դպրոցներում գործի դնել—ահա իմ փափառ, որ կկատարվի նոր դպրոցական տարրում:

Խորին շնորհակալություն ուսւա ազնիլ ու

մեծահոգի ժողովրդին: Փառք բոլոր ժողովուրերի մեծ բարեկամ ու իմաստում առաջնորդ Ստալինին,

ԳԵՎՈՐԳ Ս. ՍՈՒՐԵՆՅԱՆ
(Ուսուցիչ)

ՄԵՆՔ ՍՍՌՄ-Ի ՔԱՂԱՔԱՑԻ ԵՆՔ

Մենք վաղուց երազում էինք Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալ. և անհամբեր սպասում էինք այդ երազների իրականացմանը:

Սովետական իշխանությունը օգնեց մեղմերի իդաերն իրականացնելու, Սովետական Հայաստան վերադառնալու: Ի զիմս ուսւածողությունը մենք մեծ ու անկեղծ բարեկամի, որին մենք անսահման երախտապարտ ենք օգնության ու զորավիր լինելու համար: Մենք երախտապարտ ենք Սովետական կառավարությանը, իմաստուն Ստալի-

նին, որ Հնարավորություն տվին մեզ հայրենիք վերադառնալու:

Հայրենիք վերադառնալով մենք զգացինք այն մեծ պատասխանատվությունը, որ ունենք մենք՝ սովետական քաղաքացիներս:

Երդվում եմ արժանապատվությամբ արդարացնել ՍՍՌՄ քաղաքացու բարձր կոչումը. պիտի աշխատեմ աղնվությամբ ու անձնագոհությամբ, հարազատ երկրին օգնելով ուժերս ներածին շափ:

ԿԱՐԱՊԵՏ ՔԱՂԱԿԱԴԱՐՅԱՆ

ԶԵՐՄ ՀԱՆԴԻԹՈՒՄ

Հոկտեմբերյանի Բամբակաղաղությունը գործարանի բանվորներն ու ծառայողները շերմ ընդունելություն ցույց տվին Սիրիայից Հայրենիք դարձած հայրենին և տեղափոքեցին լավ բնակարաններում: Սեպտեմբերի 1-ին կալվարտվի 12 բնակարանից բաղկացած բնակիլի սան կառուցումը և յուրաքանչյուր բնատանիք բնակարան կտանաւ իր բոլոր հարմարություններով: Տան առաջ մեծ այգի է տնկված:

Ընտանիքների բոլոր աշխատունակ անդամներն աշխատանքի են անցել գործարանում: Պատանիներ Ս. Քեշիշյանը, Օ. Հայ-

րապետյանը և Ա. Քեշիշյանը ցանկություն են հայտնել որպայլալ բանվորներ գառնալու: Գործարանի լավագույն վարպետների մոտ նրանք սովորում են փականագործի և խառաստի արհեստները:

Գործարանի գիրեկտոր Ստեփանյանը նոր սովետական քաղաքացիների հետ զրուցներ է անցկացնում. պատմում է ՍՍՌՄ-ի պիտական կառուցվածքի մասին, սովետական քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների մասին և բարձրաձայն կարգում նրանց համար թիրթեր:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԸ ՇՐՋԱՄԱՍՎԱՄ ԵՆ ՀՈԳԱԾԱՐՈՒԹՅԱՄՐ

Քերիայի անվան շրջանում Հայրենադարձ հայերի համար կառուցված ավաններում բնակություն են հաստատել 400 ընտանիք. շրջանը ընդունելու է ևս 500 ընտանիք:

Հայրենադարձներին ցույց է տրվել և ցույց է տրվում մեծ նյութական օգնություն:

1946 թվի և 1947 թվի յոթ ամսվա ընթացքում Հայրենադարձներին ձրիապես բաժանվել է 23 տոնն հացահատիկ ու ալյուր, 2.623 զույգ պատրաստի հագուստ, 2.300 կգ. շաքար ու մուրաքա, 2.948 կտոր սապոն, մոտ 6 տոնն սննդանյութեր և 13.161 մետր

կտորեղենն: Մի շարք դեպքերում դրամական նպաստներ են տրվել 106.000 ռուբլի գումարով: Հայրենադարձների շատ ընտանիքներ ստացել են անկողին, վառելանյութ, թիթեյյա վառարանների նրանց համար կառուցվում են 400 բնակելի տներ, իրենց բոլոր հարմարություններով և անամերձ հողամասերով: Կառուցվող տների 30 տոկոսն արդին շահագործման է տրվել: Մնացած մյուս բոլոր տների ֆարալին աշխատանքներն ավարտվել են:



Երկանում ապրող հայրենադարձ հայերը, շրջապատված են հոգատարությամբ ու ուշադրությամբ:

Անհատական բնակարանային շինարարության համար երեք հազարից ավելի բնտանիքներ հողամաս և երեսուն հազարական

սուբլի պիտական վարկ են ստացել յուրաքանչյուրը: Ծրսովետների գործկոմների անդիշական աջակցությամբ 200 լնտանիքներ

ստացել են մեծ քանակությամբ շինանյութեր—ավելի քան 1.500 խորանարդ մետր անտառանյութ, 5.000 տոնն կիր, 350 քա-



Խրեան.— Լիբանանից, Սիրիայից և Հունաստանից Հայրենիք վերադարձած մի խումբ հայեր անհատական բնակարանային շինարարության համար հողամասեր են ստանում:

ավարտել են իրենց տների կառուցումն ու տեղափոխվել երկուսից-երեք սենյակից բաղկացած սեփական բնակարանները: Անհատական կարգով տներ կառուցողները

ուակուսի մետր ապակի, և այն: Քաղաքի հիմնարկ-ձեռնարկները շինանյութերի տեղափոխման համար կառուցողներին ավտոմեքենաներ են տրամադրում:

ԲԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բաղրամյան փողոցի № 42 և № 43 շինարական տեղամասերում, ամառային օրերին հատկապիս, լարված աշխատանք է տարվում: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում վեր են բարձրացել երկու բնակելի շենքի պատերը: Դրանցից յուրաքանչյուրը բաղկացած է լինելու երեք հարկից և ունենալու է 15 բնակարան՝ օժանակած բոլոր հարմարություններով—խոհանոց, լողարան, մասան:

Այս տները կառուցում են. Ռումինիայից վերադարձած հայերն իրենց համար: Աշխատանքները ղեկավարում է Կոնստանցայից եկած Ստեփան Ազյանը, որն արհեստով վարսավիր է: Սովորական երկրում փթթել են նրա կազմակերպչական ընդունակու-

ՀԱՅԵՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՄԱՐ

յուրաները, նա հմտորեն ղեկավարում է տների կառուցման աշխատանքները:

Պետությունն օժանդակում է կառուցողներին, նրանց բաց է թողնված 900 հազար տուբլի, 240 խորանարդ մետր շինափակու, 14 տոնն ցեմենտ և շատ այլ նյութեր:

Աշխատանքներին մասնակցում են 30 ընտանիք, որոնք միանալով կազմել են մի շինարարական կողեկտիվ: Հյուսնի բոլոր աշխատանքները կատարում է Բուհարեսից եկած Վարդան Ռոկեյանը. Ռոկեյանի ընտանիքը բաղկացած է 10 հոգուց, այդ տներից մեկում նա ստանալու է 4 բնակարան՝ երկուական սենյակից բաղկացած: Ծինարարության ամբողջ երկաթի արմատուրան շինում է Ժիրայր Տոնիլյանը:

Շուտով այդ տներում, որոնցից դեռ թարմ ներկի հոտ է գալիս, բնակություն կհաստատեն 30 ընտանիք:

Երկու սենյակից բնակարան է ստանալու մաթեմատիկայի պրոֆեսոր Արմենակ Մաղմանյանը, որը Բովարեստում լիրավագացացից չէր հաշվում և ավանդել կարող էր միայն հայոց դպրոցում, իսկ հայրենիքում, Երևանում նրա առաջ բացվել են բՈՒՀ-երի դռները:

Ժան Զիվանյանը և Կարապետ Փոլաթյանը գրաշարներ են և աշխատում են Հայպետհատի առաջին տպարանում. նրանք անհամբեր սպասում են իրենց ընդարձակ ու հարմարություններով օժտված բնակարանները տեղափոխվելու օրվան:

Այս տների կողքին, Բաղրամյան փողոցի վրա է գտնվում նաև շինարարական № 41 տեղամասը: Այստեղ տուն են կառուցով Բուղարիայից եկած սովետական նոր քաղաքացիները: Նրանցից շատերը պատերազմի տարիներին անասիլի տուժել են ֆաշիստական հրեշների ձեռքից:

Լենինական, (229).— Հայրենադարձ հայերի բնակարանային շինարարության համար Կոմունալ բանկի ֆաղաքային բաժանմունքը շարունակում է վարկեր տրամադրել Մինչև այժմ այդ նպատակի համար ձեռկերպված է 14 միլիոն 100 հազար սուբլովարկի:

Քաղսովետի գծով հայրենադարձ հայերի համար կառուցվում է 200 բնակարան: Տեքստիլ կոմբինատի, Կոշկիի ֆարթիկայի, Մսի կոմբինատի, Շենկոշ արտելի և քաղաքի մի քանի այլ հիմնարկ-ձեռնորդությունների գծով այդ հիմնարկներում աշխատուլ հայրենադարձ հայերի համար կառուցվում է 120 բնակարան: Քաղսովետի դորձ-

կոմի որոշմամբ անհատական բնակարաններ կառուցելու նպատակով վարկ են ստանում 150 հայրենադարձ հայեր:

Մինչև ընթացիկ տարվա վերջը Կոմունալ բանկի ֆաղաքային բաժանմունքը հայրենադարձ հայերի համար բնակարաններ կառուցելու նպատակով հատկացնելու է 26 միլիոն 850 հազար սուբլովի:

Տեքստիլ կոմբինատի բանվորներ Նշան Նշանյանը, Ղազար Ալթունյանը, Տիգրան Մելքոնյանը, անուշարանի աշխատակիցներ՝ եղբայրներ Սամվել և Նուբար Աղբարյանները և շատ ուրիշներ շուտով կավարտեն իրենց բնակարանների կառուցումը:

Կիրիվան, (229).— Այս տարի օտարությունից Սովետական Հայաստան վերադարձ հայերի համար շրջանում ծավալվել է բնակարանային լայն շինարարություն: Քաղսովետը կառուցում է 16 սենյակից բաղկացած մի շենք: Առաջին հարկի կառուցումն արդեն ավարտված է: Ազոտի գործարանի շինարարության վեկալվարությունը նորմերի համար կառուցում է 100 սենյակից ուղղացած մի շարք շենքեր: Այդ բնակարանների հետն արդեն ավարտված է: Այդ շենքներում 24 սենյակի տրվելու է նորեկներին:

12 սենյակից բաղկացած շենք է կառուց-

քից վեշտ չել կրել պառակ Բրանտի Պողոսյանը. նրա որդուն՝ Հարությունին տանչել-են ֆաշիստները: Եկել է նա իր թոռ Մարիի հետ, որպեսզի հայրենիքում նրա համար պայծառ ապահով ստեղծի: Մարիին սովորում է ԲՈՒՀ-ում: Նոր տան մեջ Բրլանտի Պողոսյանը կունենա իր հարմար բնակարանը: Նրանցից բացի, այդ տանը բնակարաններ կունենան ևս 19 ընտանիք:

Մոտ օրերս կավարտվի Հունաստանից եկած մի խումբ հայերի տան շինարարությունը: Եթինարարության զեկավար Վահագ Բագեյանը այդ շենքին կից իր համար առանձին, ոչ մեծ, մի տուն է կառուցում:

Հայրենադարձ հայերից շատերը անհատական տներ են կառուցում Սպանդարյան ույլունում: 150 շենքերի քարային աշխատանքներն ավարտված են արդեն:

Նոր քաղաքացիների նկատմամբ մեծ հոգատարություն է ցուցաբերում Սպանդարյան շրջանում: Նա Ալավերդյան փողոցի վրա կառուցում է մի շորսհարկանի տուն 80 բնակարանից բաղկացած:

կոմի որոշմամբ անհատական բնակարաններ կառուցելու նպատակով վարկ են ստանում 150 հայրենադարձ հայեր:

Մինչև ընթացիկ տարվա վերջը Կոմունալ բանկի ֆաղաքային բաժանմունքը հայրենադարձ հայերի համար բնակարաններ կառուցելու նպատակով հատկացնելու է 26 միլիոն 850 հազար սուբլովի:

Տեքստիլ կոմբինատի բանվորներ Նշան Նշանյանը, Ղազար Ալթունյանը, Տիգրան Մելքոնյանը, անուշարանի աշխատակիցներ՝ եղբայրներ Սամվել և Նուբար Աղբարյանները և շատ ուրիշներ շուտով կավարտեն իրենց բնակարանների կառուցումը:

վում կորդի գործարանում: Բնակարաններ են կառուցում նաև Հացի, Մելիսանիկական, Կոմինդրի գործարանները:

Գորագուլ, Մելրուտ, Շահալի, Ղշլաղ, Մակարաշեն և Համզաշիման գյուղերի կոլխոզները 12 շենք են կառուցում, որոնք տնենալու են 2-3 սենյակի:

Անցյալ տարի ներգաղթած հայերի համար հատկացված է 197 հողակտոր: 52 տնտեսություն բնակարանների կառուցումն արդեն սկսել են. պետությունը նրանց վարկապորել է մեկ միլիոն 300,000 ոռորդու:

ԱՀԱՎԵՐԴԻ, (ՀՀԴ). — Պղնձաձուլական գործարանի դիրքիցին հայրենադարձ հայրի համար կառուցել է երեքհարկանի մի շնորհ 20 բնակարանով որից տասը հատկացվելու է այս տարվա եկողներին: Քաղաքի նոր թաղամասում կառուցվում է հինգ բնակելի շենք՝ 2-ական ընտանիքի համար:

ԴԱՓԱՆ. — Հափանի արդյունաբերական ձեռնարկությունները և շրջանի կոլխոզները ծավալել են արտասահմանից հայրենիք վերադրող հայերի համար կառուցվող բնակելի տների շինարարությունը: Օխցիչայ գետի ափին՝ գեղադիր վայրում Զանգեզուրի հանքային վարչությունը կառուցվում է հինգ երկրնակարանային տներ՝ իրենց բոլոր հարմարություններով: Յուրաքանչյուր տուն տնի տնամերձ հողամաս, որ արդեն տնկվել է սպազատու ծառեր:

ԱՐԹՈՒՐ. — Այս տարի շրջանային կենտրոնում արտասահմանից վերադրող հայերի համար մեկ ու կես միլիոն ուռւրու բնակարանային շինարարություն է կատարվում: Աշխատանքների արագացման համար շըրջ-

Բնակելի տներ են կառուցվում նաև Քիմիական ու Հացի գործարանները: Սրանից բացի, կոլխոզներում կառուցվում է 30 բնակելի շենք. դրանցից 20-ի շինարարական աշխատանքները ավարտված են: Դաշալան, Մըղաքի և Թումանյան գյուղերում կառուցվում են 2-ական սենյակից բազկացած շենքներ:

Հայկավան կոչվող նոր բանվորական ավանում Քաջարանի պղնձամուլիքնային կոմբինատի վարչությունը տներ է կառուցվում արտասահմանից վերադրող հայերի համար:

Օրերս կավարտվեն արտասահմանից վերադրող հայերի համար կառուցվող տները Արծվանիկ, Աղարակ և Ուժանիս գյուղերում:

Առվետի կուրճական կից կազմակերպվել է կառուցվողների արտել: Ներկայումս կատարվում է հինգ խոշոր շենքերի կառուցվումը 50 բնակարանից բազկացած: Շինարարությունն ապահովված է բանուժով և շինանյութերով:

* * *



Լիբանանից ներգաղքած և թերիայի շրջանի Շահումյանի անվան կոլխոզում բնակություն հաստատած Անտոն Ղուլամջյանը խաղողի առատ բերք է անեցրել

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐՄ

Աշտարակի շրջանի Բարձրաշեն գյուղի կոլխոզը անցյալ տարի ընդունեց իրանից հայրենիք վերադարձած 10 ընտանիք: Կոլխոզի նոր անդամները ստացան ընդարձակ ու լուսավոր բնակարաններ:

Սպահանից եկած Հակոբ Անդրեասյանի ընտանիքը բաղկացած է 10 հոգուց: Մանր է եղել նրա կյանքը օտարության մեջ: Հայրենիք գալուց հետո նրա ընտանիքի շորս շափառա անդամները աշխատանքի անցան կոլխոզի դաշտերում և յոթ ամսվա ընթացքում 680 աշխատ վաստակելով, որպես ավանս ստացան 141 փոթ ցորեն:

Հակոբ Անդրեասյանի եղբայր Մկրտիչ Անդրեասյանը իր կնոջ ու որդու հետ միասին վաստակել են 500 աշխատ: Յանքերը լավ մշակելու շնորհիվ կոլխոզնիկները բարձր բերք ստացան: Պլանով նախատեսված 12 ցենտների փոխարեն նրանք հեկտարից ստանում են 15—16 ցենտներ հացահատիկ:

Բերքահավաքից հետո կոլխոզնիկները շարումակում են հայրենադարձների համար տներ կառուցել: 34 բնակարանների շինարարության քարային աշխատանքներն ավարտվել են: Նոր տները շահագործման հն տրվելու հոկտեմբերին:



Կարելի գործարանում են աշխատում հայրենադարձ մայր ու աղջիկ՝ եղիսաբեր և Հայկանուշ Հակոբյանները: Նրանք իրենց օրվա առաջարանները կատարում են 200 տոկոսով:

Եղիսաբեր և Հայկանուշ Հակոբյանները Հայրենիք են վերադարձել Բուլղարիայից:

ՆԱՅՐՈՒՄ. — Եղիսաբեր և Հայկանուշ Հակոբյանները աշխատանքի ժամին:

ԳՏՆՎԱԾ ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ասատուր Գևորգյանը հայրենիք է եկել մինիայից, իսկ Պողոս Գևորգյանը — Հութուղարիայից, Բենիամին Բալյանը — Ռունաստանից: Նրանց հետ միասին հայրենի

հողի վրա ոտք են դրել նաև Ադամ Դավթյանը, Գաբրիել Գաբրիելյանը և Մովսես Թուշյանը: Նրանք բոլորն էլ այժմ աշխատում են Ալավերդու պղնձաձուկան գործարանում:

Թենիմին Բալլանը ծնվել է Թյուրբիացում, մի երկրում, որը նրա համար խորթ մայր է հանդիսացել ու նա ստիպված է եղել Ռումինիա անցնելու:

— Ես 65 տարեկան եմ, բայց թիում է, թե մի տարի առաջ եմ ծնվել, — ասում է նա, — ես այժմ միայն զգում եմ ազատ կյանքի ու աշխատանքի ողջ երջանկությունը: Որքան շատ բան է փոխվել իմ կյանքում այս վերջին մի տարում: Եթի անցյալում ես հարկադրված էի ամեն օր մտածել այն մասին, թե ո՞ւր և ի՞նչպես պետք է վաղվա համար մի կտոր հաց վաստակեմ, ապա այժմ, Սովորական Հայոստանում, ես ծերու եմ բերել աշխատանքի, հանգստի, ու ծերության ժամանակ ապահովության իրավունք: Այս բոլորի համար ես պարտական եմ մեր Հարազատ հայր ու առաջնորդ ընկեր Ստալինին, որը օգնեց ինձ, ու ինձ նման հաղարավոր Պայերի, Հայրենիք վերադառնալու ես աշխատում եմ պղնձաձուլական գործարանում և վաստակում եմ ամսական 1100—1200 ռուբլի: Աղջիկս, Սոնյան, աշխատում է կարի արհեստանոցում ու ամսական վաստակում է 1200 ռուբլով ավելի: Ապրում ենք գործարանի շենքում: Պետությունը ինձ 30 հազար ռուբլի վարկ է բաց թողել և այժմ ես արդեն ավարտելու վրա եմ իմ տան շինարարությունը: Մեծ Շոկտեմբերյան Սոցիալիստական Ռեզուցիայի 30-ամյա տարեդարձի ուրախ տոնը ես կոֆմավորեմ իմ սեփական տանը:

Բալլանը կարճ ժամանակամիջոցում առաջարկոր ձուկող է դարձել: Հունիսին նա ամսախան նորման կատարել է 280 տոկոսով: Պողոս Գևորգյանն ապրում էր Հունաստա-

նում, իսկ նրա որդին՝ Ասատովը հարկադրված էր Բոլղարիա անցնելու: Անցյալ տարի, սկզբում որդին և ապա հայրը, Հայաստան եկան ու այժմ երկուով աշխատում են գործարանում: Գործարանը հոր լավ բնակարան է հատկացրել իսկ որդուն—սենյակ: Ասատովը էլեկտրաղողով է, իսկ 58-ամյա հայրը ցեխի պահեստավակուտ Ընտանիքին տրվել է հագուստ, ոտնաման ու սննդամիերքներ: Գործարանի կազմակերպությունները մեծ հոգատարություն կն ցուցաբերում սովորական նոր քաղաքացիների նկատմամբ:

— Արտասահմանում ես ապրել եմ ավելի քան կես դար, — ասում է Պողոս Գևորգյանը, — բայց ոչ մի անգամ չեմ մասնակցել պետական իշխանության օրգանների ընտրության, իսկ այստեղ այդ բանն ինձ հաջողվեց անել առաջին իսկ տարում, երջանկություն չէ՝ սա միին: Մեզ, արտասահմանից նոր վերադարձներին, ոկրում տարօրինակ էր թվում, որ թատրոնում բանվորները նստում են գործարանի դիրեկտորի կամ շբանավետի գործկոմի նախադաշի կողքին, որ ժողովներում ես կարող եմ առանց որևէ վախի քննադատել գործարանի կամ ցեխի զեկավարների բացերը: Այս մասին մենք արտասահմանում մտածել իսկ չենք կարող:

Արտասահմանյան հայերի 16 բնտանիք է ընդունել պղնձաձուկական գործարանը: Նրանք բոլորն էլ ապահովված են բնակարաններով ու հագուստով: Նրանցից յուրաքանչյուրը ամեն օր զգում է մայր-հայրենիքի հայատարությունը: Ներկայումս ալարտվելու մոտ է հայրենադարձ հայերի համար կառուցվող 16 բնակարանից բավկացած երկհարկանի տան շինարարությունը: Բացի դրանից նրանց համար կառուցվում են 10 առանձին-առանձին տներ:

ԷՆՏՈՒԶԻԱՍՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Եմիրզա Բարախչյանն աշխատում է Կիրովականի ազգային պարարտանյութերի գործարանի շինարարական տեղամասերից մեկում: Նա 60 տարեկան է, բայց աշխատում է մեծ եռանդով: Նա իր որդիներին ևս—իսկանդարին, Գևորգին ու Գրիգորին սովորեցնում է քարտաշի արհեստու: Ի նրանց հետ մի բրիգադա է կաղմանկերպել:

Վաղ առավոտից շինարարական տեղամասում սկսվում է լարված աշխատանքը: Հայրը որդիներին օրվա առաջարանը

տալիս ու բացատրում, թե ինչ պետք է անեն: Նա սիրում է կարգապահությունը: Ի շի կարող տանել անփոփոխություն աշխատանքի մեջ: Որդիներն, իմանալով նրա պահանջկոտությունը, ճշտությամբ կատարում են նրա ցուցաբերքները, օրըստօրի կատարելագործվելով իրենց արհեստի մեջ:

Բրիգադան անձնագործ աշխատանքով նըլամել է շինարարական տեղամասի ողջ կողեկանիւ սերն ու հարգանքը:

— Եթե մենք ավարտենք գործարանի շի-

նարարությունը, մեր դաշտերը առատ պարարտանյութ կստանան, կաճի բերքատվությունը, — այսպես է մտածում վարպետ Թարախանը: Նա գիտի, որ դաշտերի բարձր բերքատվությունը — դա մեր ժողովրդատընտեսության ամրապնդումն է ու աշխատավորների բարեկեցության աճը:

Թարախանի բրիգադան լավագույն ցուցանիշներով է ավարտել հունիսի պլանը:

Հավասար շարքերով դասավորվել են վարդիտորեն տաշված քարերը: Բրիգադան օրվա առաջադրանքները կատարում է 200 տոկոսից ոչ պակաս: Բրիգադայի անդամները մրցում են միմյանց հետ: Եինարարների ողջ կոլեկտիվի հետ միասին նրանց միմիտք է զբաղեցնում — սահմանված ժամկետին ավարտել շինարարությունը:

—



Հայրենադարձ արվեստագետները ստեղծագործական ենր եռանդով են մասնակցում Սովետական Հայաստանի արվեստի և կուլտուրայի ծաղկման ու վերելի գործին:

ՆԿԱՐՈՒՄ. — Երևանի Ա. Սպենդիարովի անվան Օպերայի և Բալետի թատրոնի հայրենադարձ արտիստումի Թագուհի Քյոսեյանը Անուշի դերում:

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԵՌԱՌԴՈՎ

Մեկ տարի առաջ հայրենիք վերադառնաւ: Լով ես իմ երեք քույրերի հետ միասին ցանկություն հայտնեցի աշխատել Կիրովականի Կորդի ֆաբրիկայում: Առաջին իսկ օրվանից մենք զգացինք: Հարազատ մթնոլորտում: Սկզբում որպես աշխատում էի փաթաթող մեքենայի վրա, ապա որակա-

վորվեցի և դարձա մեքենավար: Մեծ էր իմ հրճվանքը, երբ ինձ վստահեցին մեքենայի ղեկավարությունը: Զէ՞ որ ես աշխատում եմ հարազատ Հայրենիքում, նրա բարօրության: Նրա ծաղկման համար: Այդ միտքն ինձ ավելի է ուրախացնում: Մեքենավար դառնալում պես սկսեցի մրցել հայրենադարձ եկա

Թարախանի հետ և պարտավորվեցի այս տարվա պլանը կատարել Մեծ Հոկտեմբերի 30-ամյակի օրը:

Ամեն օր աշխատանքի եմ գալիս ժամանակից շուրջ, խնամքով նախապատրաստում եմ իմ աշխատանքի տեղը, դասավորում իրենքը, ստուգում մեքենայի տեխնիկական վիճակը: Լուրջ կերպով հետևում եմ մեքենայի անխափան աշխատանքին, որպեսզի խոտան փաթթվածք չլինի:

Աշխատանքը դասավորում եմ այնպես, որ ոչ մի բոստե իջուր չկորչի. օրվա պլաններս սկսել եմ կատարել մինչև 300 տոկոսով: Լավագույն ցուցանիշների են հասել նաև իմ երեք քույրերը՝ Ռոզան, Արագիշան և Լուսիկը: Կարճ ժամանակում տիրապետելով

աշխատանքի տեխնոլոգիային, լուսիկը անվանի ստախանովական դարձավ և այժմ աշխատում է որպես բրիգադիր, միաժամանակ սպասարկելով 15 մեքենայի: Արագիշանը հաջորդամբ աշխատում է մանող մեքենայի վրա: Տիրապետելով իր մասնագիտությանը, նա այժմ օրվա առաջադրանքները կատարում է 200 տոկոսով:

Մյուս գույքու՝ Ռոզան չի հանգստանում պլանները գերակատարելով, նա ամեն օր հարստացնում է իր գիտելիքները:

Մենք Հոկտեմբերի մեծ տոնը կդիմավորենք արտադրական բարձր ցուցանիշներով: Կիրովականի Կորդի ֆարբիկայի հայրենաղարձ մեմենավարումի՝

Ժ. ՏՈՂՄԱՉՅԱՆ



Լենինականի Տեխնիկական կոմիտենախի հայրենա դարձ ստախանովականներ Թագուհի, Վարդուհի և Հովհաննես Փափազյանները: Եղբայրը իր երկու քույրերի հետ սպասարկում են 16-ական դազգան և պլանները կատարում 130—140 տոկոսով:

ՀԱՅՐԵՆԱԴՐՁ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԵՐԻՏԱՍ ԱՐԴԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆ

Թաշարանշինի Հանքավան տեղամասումն է աշխատում Հայրենագարձ Հայերից կազմված կառուցողների՝ Շ. Թումանյանի երիտասարդական բրիգադան:

Երիտասարդ կառուցողները ստախանովան աշխատանքի շնորհիվ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ժամկետից մեկ ամիս շուրջ ավարտեցին երեք նոր ու մեծ շենքերի

շինարարությունը, որտեղ տեղավորվել են Հայրենագարձ Հայերի ընտանիքները:

Մավալելով Մեծ Հոկտեմբերի 30-ամյակի անվան սոցմրցությունը, բրիգադան հունիսի 25-ին կատարեց տարեկան առաջադրանքը: Երիտասարդ կառուցողներ լնկ. ընկ. Վ. Պետրոսյանը, Լ. Ղազարյանը, Ս. Միքոլյանը և ուրիշներ իրենց ամսական առաջա-

դրանքները կատարում են 250—270 տոկոսով: Նրանք հմտութեն կիրառելով Մատրոսովի փորձը, անընդհատ կատարելագործում են իրենց աշխատանքի մեթոդները և օրբորին բարձրացնում արտադրողականությունը: Աշխատանքները կազմակերպում են այն հաշվով, որ մինչև սովորական ժողովրդի

մեծ տոնի օրը՝ նոյեմբերի 7-ը կատարեն և մեկ տարվա նորմա:

Բրիգադան այժմ ձեռնամուխ է եղել փորձական ֆլուտացիոն ֆաբրիկայի կառուցման աշխատանքներին և պայքարում է այն ժամկետից շուտ շահագործման հանձնելու համար:

* * *



Պետհամալսարանի հանրակացարանում.— Հայրենադարձ ուսանողներ Սմբատ Ղազարյանը և Գուրգեն Սարգսյանը (առաջին պլանում) հանգստի ժամին ուսանողների մտերմ շրջանում:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ԵՐԵԿՈՒՅԹ - ԶԲՈՍԱՆՔԸ

26. Կոմունարների անվան կուլտուրայի հանգստի պարկում հունիսի 27-ին տեղի ունեցավ արտասահմանյան երկրներից վերադարձած հայերի ճոխ երնկույթ-գրուսանքը: Խմբերով դեպի պարկ էին շտապում երեխանում բնակություն հաստատած ներդադրած հայերը իրենց ընտանիքներով, բարեկամներով ու հարազատներով: Նրանք գալիս էին ավտոմեքենաներով Արարկիրից, Ալումբինշտադինից, Նոր Բութանիայից: Զրոսանքին մասնակցում էին Երևանի գործարաններում, նորակառուցներում, գիտության և արվեստի բնագավառում աշխատող բազմաթիվ հայրենադարձ հայեր:

Կուլտուրայի և հանգստի պարկի ընդհանուր մուտքի ճակատին փակցված կարմիր պաստառի վրա հյուրերը կարգում էին հյուրերից կարգում:

յավառ ողջույն արտասահմանյան հեկրներից Սովորական Հայաստան վերադարձած մեր եղբայրներին ու քույրերին լողունքը: Վյուղ գյուղավոր ծառուղին զարդարված էր ժողովուրդների իմաստուն առաջնորդ, մեր հաղթանակների կազմակերպիչ մեծ Ստալինի և նրա մերձավորագույն դինակիցների մեծագիր նկարներով ու կարմիր դրոշակներով:

Կուլտուրայի և հանգստի պարկի բոլոր ծառուղիներում հորդում էր ուրախությունը: Նվագում էին փողային, ջազ և արևելյան նվագախմբերը: Ասֆալտապատ հրապարակում պարում էին հայրենադարձները:

Քիչ հեռու նվագում էր դժուն ու գուլան: Դնալով լայնանում էր «Քոշարի» և կլոր պարերի շրջանը:

Մի այլ ծառուղում, նստարանների վրա տեղ են գրավել մի խոմբ հայրենադարձ հայեր, որոնք աշխատում են Երևանի Կոշիկի առաջին ֆաբրիկայում: Նրանք նվազում, երգում և ուրախ ժամանակ են անցկացնում: Գ. Ավագյանը կիթառի նվագակցությամբ երգում է հարավսլավական ժողովրդական մի երգ: Նա ստախանովական րանզը է և իր պլանը կատարում է 250 տոկոսվէ: Մ. Գալուկյանը, որ վերագրձել է Բուլղարիայից իր պլանը կատարում է 70 տոկոսով:

Ջրոսանքի եկած հարյուրավոր ընտանիքների թվումն էր ստալինյան նոր հնգամյակի նորակառուցներից մեկի՝ Ալյումինիումի շինարարությունում աշխատող, Սիրիայից վերագրձած Պարունակ Կոպալյանի ընտանիքը, որը բաղկացած է հինգ անձից: Ենքը Կոպալյանը որակյալ հյուսն է, կինը՝ Մարին և 17-ամյա աղջիկը՝ Ֆլորան աշխատում են Արարկիի արդյունաբերական կոմբինատում, իսկ մյուս երկու երեխաները սովորում են դպրոցում: Կոպալյանը շատ դո՞ւ է, որ գոնզում է իր հայրենիքում: Նրա համար ստեղծվել են աշխատելու և ապրելու բոլոր պայմանները: Նա շուտով կավարտի

իր նորակառուց բնակարանի շինարարությունը:

Հայրենադարձ հայերի մի խոմբ էր հավաքվել այդու գրադարան-ընթերցարանում: Նրանք հետաքրքրությամբ դիտում էին ի. Վ. Ստալինի պատանեկությունն ու ունվազիոն գործունեությունը պատկերող նկարների ալբոնը:

Ընդարձակ էստրադայում Հայկական ՍՍՌ Արդարադատության մինիստր ընկ. Գ. Նազարյանը զեկուցում է Սովետական Միության և Հայկական ՍՍՌ-ի հասարակական-պետական կառուցվածքի մասին, որից հետո Հայֆիշարմանիան սկսում է իր ճոխ համերգը: Այդու ծառուցներում ցուցադրվում էին «Հայրենի երկիր», «Երիտասարդության շքահանդեսը» և մի շարք այլ կինոնկարներ: Երեկույթ-զրուանքին, որ շարունակվեց մինչև ուշ գիշեր, մասնակցում էին ավելի քան 15 հազար մարդ: Ջրոսանքը վեր էր ածվել հայրենասիրական շեմ ցուցի ի պատիվ բոլշավիկների մեծագույն պարտիայի և սիբելի Ստալինի, որի ամենաշերմ հոգատարության շնորհիկ տասնյակ հազարավոր հայեր վերագրձել են պանդիստությունից և գաել իրենց հայրենիքը: (224)

—————*



Հայրենադարձ գրգազործներ Գյուրջի Պատր իկյանը (աջից) և Սովորան Ներսիսյանը «Երգության շրաբելում զրավում են իրենց սիրելի արվեստով և զործում են գեղեցիկ գորգեր հարազատ հայրենիքի համար:



Յուլիարիայից Հայրենիք վերադարձած Ս. Պահկյանը (աշխատ) և Ս. Երեմյանը աշխատում են էլեկտրալուսավորության արվատությի գործարանում և պատրաստում են զեղցիկ լուսամփոփներ ու այլ կենցաղային իրեր

— * —



Միրիայից Հայրենիք վերադարձած Ս. Փափաջյանը (ձախից առաջինը) և Ն. Կալխակյանը (երկրորդը) աշխատում են Երևանի ժամացույցի գործարանում: Նրանք ժամացույցների հավաքման շնորհալի մասնագետներ են հանդիսանում